



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԵԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

(ՀԱՄԱՌՈՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)



այ Եկեղեցին թեև աշխարհագրականորեն տարածվել է ամբողջ աշխարհով մեկ, այնուամենայնիվ այն մեկ է իր դավանանքով և իր նվիրապետությամբ:

Քրիստոնեական Ընդհանուր Եկեղեցու կարևոր ստորոգելիներից մեկն է Միաւրյանը: Հայոց Եկեղեցին ևս մեկ է իր հավատով, ծեսով, սուրբ խորհուրդներով, իր կանոնական օրենքներով և ավանդություններով, իր նվիրապետական և վարչական դրությամբ:

Հայ Եկեղեցու նվիրապետության կամ հռագուր իշխանության բարձրագույն Գլուխն է Սուտք Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետը, օրինու և իրավամբ: Նա վերահսկողն ու պահապանն է Հայ Եկեղեցու դավանության, ծեսի, օրենքների, կարգերի, ավանդությանց և միության և ունի լիակատար իշխանություն: Հայ Եկեղեցու վարչության վրա, կանոնական սահմանների մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռը Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի Առաքելական Աթոռն է և նա օրինավոր հաջորդն է նաև Ս. Գրիգոր Լուսավորչի:

Հայ Եկեղեցու միությունը մարմնավորվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձի մեջ: Ով չի ճանաչում այս միակ Գլուխի կանոնական իրավասությունը, նա դուրս է մնում Հայ Եկեղեցու միությամբ:

Հայ Եկեղեցու նվիրապետության դարավոր ու պատմական գերագահ Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը չի մնվել է Դ դարի սկզբում Վաղարշապետության գլխա-

տում, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հիման վրա, երբ Միածնը իշավ ի Հայաստան Աշխարհ և Արարատյան զաշտի սրտի վրա հիմքը դրեց հայ հավատի մեծ Կաթողիկեի: «Եւ սիւնն հրեղէն՝ կաթողիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի մի միարանութիւն սուրբ հաւատոյ ի ներքոյ թևոցն իւրոց... և անդին այն լիցի տանար Աստուծոյ և տուն աղօրից խնդրուածոց ամենայն նաւատացելոց և Աքռա Քահանայապետութեան» (Ազաթանգեղոս):

Ամենայն Հայոց Հայրապետության առաջին աթոռանիստ մայրավանքը եղել է Վաղարշապատը: Հայրապետական Աթոռը առհասարակ հաստատված է եղել քաղաքական իշխանության կենտրոնում, ովասն հանապազորդ բանակցութեանց ընդ տիրողս աշխարհին մերոյց:

«Ժամանակի ընթացքին, — գրել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, — տեղափոխվեր է Աթոռը, այլ չէ տեղափոխվեր աստվածահրաշ տեղին իշման և չէ փոխվեր Աթոռում իշխանությանց և իրավասությանց, արևոտնությանց և պաշտամանց կերպն ու կարգը»: «Հայոց Կաթողիկոսությունը երբեք տեղագրական անոն չոնցավ Աթոռին կամ Հայրապետության տեղեն առնված, այլ միշտ կոչվեցավ Կաթողիկոսություն Ամենայն Հայոց: Այդ կոչման զորությամբ նա իրավունք ունեցավ յուր Հայրապետանոցը հաստատել այնտեղ՝ ուր կտոնվեր ազգին քաղաքական կեդրոնը, որն ալ ըլլար ժամանակին իշխող կամ տիրապետող կառավարության գլխա-

վոր քաղաքու (Օրմանյան, «Հայոց եկեղեցի», թիւրութ, 1957 թ., էջ 42):

Հայրապետական Աթոռը Վաղարշապատու մնաց Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև Հովհանն Մանդակոնու ժամանակը՝ 485 թվականը, մոտ երկու դար, երբ այն փոխադրվեց Դվին, ուր նստում էին «մարզպանք Հայոց և ապա արաբք ոստիկանք»։ 927 թվականին, Հովհանն պատմաբանի օրով, Աթոռը փոխադրվեց Աղթամար, ուր իշխանը էին Արծրունիները, ապա Բագրատունների մոտ՝ Արգինա, Անանիա Մոկացու օրով 947 թ., Անի՛ Սարգիս Սևանցու օրով 992 թ., ուկ Ռուսիանների ժամանակ՝ Հովհանն, Գրիգոր Պահլավոնու օրով 1166 թ., Սիս՛ Գրիգոր է Անավարդեցու օրով 1293 թ., Գրիգոր Թ Մուսարեկյանի օրով, 1441 թվականին, Կիլիկիայում Ռուբինյանց անկումից կես դար հետո, Աղդի Հավանությամբ և ազգային-եկեղեցական ժողովի միաձայն որոշմամբ, Հայրապետական Աթոռը վերաբարձավ իր նախկին պատմական վայրը՝ «ի բնակ տեղին իւր Ս. էջմիածին», որտեղ մնայուն կերպով նստել են այդ ժամանակից ի վեր Ամենայն Հայոց բոլոր Հայրապետները, մոտավորապես 520 տարի։

Հայ Եկեղեցին ունի տեղական ինքնավարության սկզբունքի վրա հիմնված նվիրապետական երեք Աթոռ ևս, գլուխ ունենալով Մայր Աթոռ Ս. էջմիածինը։ Հայ Եկեղեցու նվիրապետության մեջ կանոնական դիրք ունեցած այդ Աթոռներն են՝ պատմականորեն կազմված Ս. Երոսաղեմի Պատրիարքական Աթոռը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը Սուում և Թուրքիո Հայոց Պատրիարքական Աթոռը Կոստանդնուպոլսում, որոնք ու հոգևորս ենթակա լինելիք Ս. էջմիածնի գերազա՞ Աթոռին, պահում են իրենց ներքին ինքնավարությունը՝ «ի վարչականս», Ս. էջմիածնի Աթոռի գերազա՞ ության տակ, «մեկ Եկեղեցի, մեկ Գրուխ» սկզբունքի լույսի տակ։

Այս ինքնավար աթոռների գոյությունը երեք շի խանգարում Հայ Եկեղեցու միարյունը, որովհետև դրանք միմյանցից բոլորովին անկախ միավորներ շեն, այլ մի մեծ ամրողացի անբաժանելի մասերը, որոնք կանոնական որոշ օրենքներով կապված են Հայ Եկեղեցու կենտրոնական Աթոռ Ս. էջմիածնին։

Յուրաքանչյուր այդ ինքնավար Աթոռի հեղինակությունը արածվում է իրեն համար սահմանված շրջանակի վրա միայն։ Այդ երեք Աթոռներից մեկի իր շրջանակից գուրս գալը և մյուս Աթոռների իրավասությանը ենթակա շրջանների վրա իր հեղինակությունը տարածել փորձելը միշտ դիտվել է որպես բացահայտ հակականոնական արարք և դատապարտվել է։

Այս հոդվածաշարում մենք համառոտակի կիսունք Կիլիկիո Կաթողիկոսության ծագման և պատմության մասին, սկզբից մինչև մեր օրերը։

Քաղաքական խառն ժամանակների թիւրումով Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը սկզբանը է 1445 թվականին, երբ 1441 թվականին Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը վերահաստատվեց իր պատմական դարավոր կենտրոն Ս. էջմիածնում։

Ժե դարի քառամսնական թվականներին Հայրապետական Աթոռի վերադարձը Սսից նորից էջմիածին՝ մեր ազգային-եկեղեցական պատմության շրջադարձային գեղագիրից մեկն է հանդիսանում՝ որպես հիշատակության արժանի պատմական տարեթիվ։

Կիլիկիայում 1375 թվականին, հայկական իշխանության՝ Ռուբինյանց անկումով վտանգվում էր նաև Հայաստանյայց Եկեղեցին։ Ինչպես պատմական տվյալներն են ապացուցում, հատկապես Սսի Հայրապետանոցում թելագրում էին կաթոլիկ հոգևորականները։

Ի մասնավորի լուսինյան վերջին լատինամիտ թագավորները, հակառակ հայ ժողովրդի և հոգևորականնության բուռն ընդդմության, «վասն քաղաքական ակնկալութեանց» մեծ զիջումներ էին անում Հռոմեական Եկեղեցուն, որպես սպազմական ապացուցինոցա պահել զիշականության իւրեանց ի Կիլիկիա։

Հայ հողից ու հայկական միշավայրից հեռու, օտար եկեղեցական ու քաղաքական ազդեցությունների շրջանակի մեջ ընկած, Հայաստանյայց Եկեղեցին կարող էր կորցնել իր գերազոր սվիրապետությունը, ավանդությունները, իր ազգային նկարագիրը, իր ինքնուրույնությունն ու անկախությունը։

Կիլիկիայում հայկական քաղաքական իշխանության անկումով, այլև ոչ մի արդարացուցիւ պատճառ չէր մնում, որ «իր շրու ու փառքը կորուսած, ափ մը բախտափնդիր եկեղեցականներու ձեռք մնացած, ազգային մասնին հսկողութենին հեռացած, ուղղություն և ավանդություն մոոցած, Եկեղեցվուածն ու սրբությունը մեկ կողմ թողած, լոկ անձնական ու արկածալից գործերու հետամուռ Հայրապետական Աթոռը մնար» Կիլիկիայում (Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Աղքապատում» թ., էջ 2103)<sup>1</sup>։ Հայրապետական Աթոռը Սուում ապրում էր իր պատմության ամենածանր և տաղնապալից շրջաններից մեկը, երբ բախտախնդիր մարդիկ փողի, արյան և այլ անազնիվ միջներով

<sup>1</sup> Հոդվածաշարում Օրմանյանի «Աղքապատում»-ից կատարված մեջրերումների տեսք կիշենք կրնաւ Օրմ. կադ. Ա կամ Թ և էջը։

հափշտակում էին Կաթողիկոսական Աթոռոր, ըստ Թովմա Սեծոփեցու Վկայության:

Այս պայմանների մեջ «ԵՄԻ»՝ Կիլիկիո երթեմնի շքեղ մայրաքաղաքը, այլևս որևէ հրաբույր չուներ կեդրոն մը ըլլալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսության» (Բարգեն Ա. Աթոռակից Կաթողիկոս, «Պատմություն Կաթողիկոսաց Կիլիկիո», Անթիլիսա, 1939 թ., էջ 1127)<sup>2</sup>, և անույնիսկ Կիլիկիո վերջին կաթողիկոսունք անտանելի կդունեին Սիսր, քանի որ ժողովուրդը զաղթած և պահծալի մայրաքաղաքը իսլամ բռնվթեանց ներքև ճզմը-ված էր և չէր կրնար կեդրոն ըլլալ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան» (ԲԱԿ Պատմ. 1188):

Համազգային տագնապի այդ ծանր օրերին, Հայ Եկեղեցու և Հայրապետական Աթոռի այդ անփառունակ և տիսուր կացության հետ չէին կարող հաշտվել արևելյան վարդապետները, աղթամարցիք (վասպորականցիք), սյունեցիք, ինչպես նաև ժամանակի բոլոր հայրենասեր և նախանձախնդիր հոգևորականներն ու ինքը՝ հայ ժողովուրդը: Համազգային ցանկությամբ և ժողովական որոշմամբ վճռում են փրկել Աթոռը, այն փոխադրելով իր նախանձական և նվիրական սրբավայրը՝ Ս. Էջմիածին, ուր այդ օրերին համեմատարար խաղաղ պայմաններ էին ստեղծվել:

Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին վերադարձի շարժման գլուխն էին կանգնել Տաթևյան աշակերտությունը, Կիլիկյան ողջամիտ և Եկեղեցանվեր հոգևորականներն ու ժողովուրդը: Աթոռի փոխադրության եռանդուն գործիչներից էին Գրիգոր Տաթևյացու աշակերտուներ Թովմա վարդապետ Մեծոփեցին՝ Մեծոփա վանքի առաջնորդը, Հովհաննես վարդապետ Կոլոսիկ կամ Հերմոնեցի՝ առաջնորդ Տաթեկի վանքի:

«Կիլիկիո Աթոռին անկումը ընդհանուր Ազգին մտադրությունը կհրավիրեր, մանավանդ Տաթևյան աշակերտության աշքին, իբր Եկեղեցվու վերանորոգության կիսական կետ մը: Ուտք էր Հայրապետական Աթոռը ազատել Կիլիկիո վարակյալ մթնոլորտեն, սակայն ցորչափ օրինավոր հաջորդության գիծը այնտեղ մնացած էր, դյուրին չէր այդ կետը հանկարծ լուծել և անպատճառ կերպով որոշման մը հանգիլ: Աղթամարի Աթոռն ալ բավական ճոխություն ստացած էր, և Մեծ Հայոց Կաթողիկոսության ձև առած էր, մինչ Կիլիկիո Աթոռը Փոքր Հայոց Կաթողիկոսության անոնմով կհիշվեր անդատին Մխիթարի օրեն (ՄՆՍ. իջ 1258) և այդ կոշումները Աղ-

<sup>2</sup> Հոգվածաբարում Բարգեն Ա. Կաթողիկոսի «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո աշխատությունց կատարված մեջբերումների տեղը կիշենք կրնար՝ ԲԱԿ Պատմ. և էջը:

թամարին կարևորությունը կբարձրացնեին: Չմոռնանք հիշել, որ նույն միջոցին Աղթամար նստող Զաքարիա և Դավիթ կաթողիկոսները ավելի կարժեին, քան Սիս նստող Կարապետն ու Հակոբը: Այդ ամեն պարագաները հիմնական փոփոխության մը. և կարևոր բարենորոգության մը պետքը կզգացնեին Եկեղեցվու շահերով տոփորված հոգիներուն» (Օրմ. Ազգ. թ 2022):

Էջմիածնի Աթոռի վերանորոգումը, գրել է Բարգեն Կաթողիկոս, «անշուշտ բոլոր հայ ժողովուրդը խանդապառեց Արևելյան Հայաստանի մեջ» (ԲԱԿ Պատմ. 1193):

Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի հարցը պաշտոնականացվել և աղային-Եկեղեցական ժողովի որոշումով կանոնականացվել է հատուկ հրավիրված աղային-Եկեղեցական մեծ սրբազն ժողովում:

1440 տարին անցավ ազգային-Եկեղեցական ժողովուրդը հրավիրման և հաջող անցկացման նախապատրաստական աշխատանքներով: 1441 թվականի սկզբներին շրջարարականներու ուղղվեցին ամեն կողմէ Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի շարժման ղեկավարների ցանկությունն էր որպես շարժման «հաջողության հիմ և օրինավորության փաստ գործին հակառակության շհանդիպիլը և ընդհանուր համակամությամբ և հավանական գրնանվիլը», ինչպես որ եղավ Ամեն կողմէ ուղարկվեցին շրջարարական գործուներ, Շփոթանական կազմով և թի՛ պատգամավորների մեծ թվով:

1441 թվականի Էջմիածնի ժողովը լիիրավագային-Եկեղեցական մեծ ժողով էր թի՛ իր ներկայացուցչական կազմով և թի՛ պատգամավորների մեծ թվով:

1441 թվականի մայիսին Երևանում հավաքվում են, ըստ Մեծոփեցու վկայության, ավելի քան 300 պատգամավորներ, Հոգևորական և աշխարհական. այլ նաև սուլը Հարք և պատուական երիցոնք, ազատք և որդիք ազատաց, ձեռնատրք և տանուտէրք, որոնք Երևանի Յաղուր խանի գորքերի պաշտպանությամբ, «փողով, թմրկով և զուռնով» ուղևորվում են Ս. Էջմիածին:

Էջմիածնի ժողովին հականի հանվանեմասնակցում էին Արևելյան Հայաստանի լորս մեծ Աթոռների՝ Քջոն Հովհաննես կոլոտ, Հայրատի Գրիգոր, Տաթևի Եմավուն, Արտազի Գրիգոր Եպիսկոպոսները, ողոնք հիմ կտնոնվ Շկաթողիկոսաներ ճանաչվել են, ինչպես նաև սյունեցիներից Հովհաննես Հերմոնեցին, Զաքարիա Հավուցթառեցին, Ստեփան Սյունեցի արքապետակոպուր և շատ ուրիշներ՝ Այրարատյան վիճակից կամ միջնաշխարհից. Գարբիել Էջմիածնեցին, Կարապետ Հովհաննավանեցին, Անտոն Խորվիրապեցին, Հակոբ

Կողակեցին և ուրիշներ. Վասպորականցիներից՝ Հովհաննես Արմիշեցին, Թովմա Մեծոփեցին, Կիրակոս Ռշտունին, Զաքարիա Վարագեցին և շատ ուրիշներ։ Ժողովին ներկա էին նաև Կիլիկեցի «շորս և պահպառու ի ներին կողմանց», այսինքն՝ Թմակալ չորս առաջնորդները, էջմիածնի ժողովին կիլիկյան եպիսկոպոսների մասնակցության պարագան «կցուցնե», թե փոխազության գործը Կիլիկիո եպիսկոպոսական մարմնին հավանությունն ալ ստացած էր» (Օրմ. Ազգ. Բ 2096):

Քաղաքական արքակաների և հեռավորության պատճառով, նրանք, որոնք չեին կարողացել ներկա լինել ժողովին, ինչպիս Աղթամարի և Տարոնի վարդապետները և ուրիշներ, «թղթով միաբանեալ էին ժողովի նպատակներին և որոշումներին, որով, եղրակացնում է Օրմանյան սրբազնոը, իրավամբ ռկաղարշապատի ժողովը ընդհանուուր Ազգին և ընդհանուր եկեղեցականության համակամ և համահաճ համաձայնությամբ գործեց առանց բացառության, և օրինավոր ու վավերական ժողով եղավ և եկեղեցական կանոններու և ազգային իրավունքներու հիմամբ կատարվեցավ Հայրապետական Աթոռին Սիսի էջմիածին փոխադրվիլը, ուրիշ հեռացած էր 484-ին» (Օրմ. Ազգ. Բ 2108):

«Աթոռի վերահաստատությունը էջմիածնի մեջ այնպիսի դեպք մըն էր, — գրում է լուսահոգի Բարգեն կաթողիկոսը, — որ կիլիկեցիք անտարակույս ըմբռնած պիտի ըլլային անոր նշանակությունը և բար այնմ պիտի բռնեին իրենց գիրքը» (ԲԱԿ Պատմ. 1208):

Կիլիկիայում հայկական քաղաքական իշխանության անկումը (1375 թ.), Կաթոլիկ Եկեղեցու ունաճությունները Հայ Եկեղեցուներս, Եփիպատուի մամլուքների հաճախաղիպ հարձակումները, հարեւան մահմեղական սովորականությունների ասպատակությունները, ժամանակի այս բոլոր ոժնուակ քաղաքական պայմանները «Կիլիկիո մեջ ընդհանրապես և մասնավորապես Սիսի մեջ, այնպիս որ կատարյալ ողջակիզում մըն էր կաթողիկուներուն պաշտոնավարությունը կործանյալ և հայութենե զրկիթ թափուր մայրաքաղաքին մեջ» (ԲԱԿ Պատմ. 1210):

Խանդակառու սրտապին մթնոլորտում, Վաղարշապատի ժողովը միահամուր հավանություն տվեց Մայր Աթոռի Սսից էջմիածին Հայրենադարձության, որովհետև «չէր այլս պատճառ պահելոյ զԱթոռ Հայրապետության Հայոց ի տար աշխարհին, հեռի ի ժողովը դենք հայոց, ապա հարկ անհրաժեշտ կայր փոխել զԱթոռ Հայրապետության ի Սսոյ անդրեն ի Վաղարշապատ՝ ի բնակ Մայր Աթոռն Հայոց, և մանավանդ Մուսարեկյանցի կող-

մից ուշ մի բողոքի և ու մի հակառակության հիշատակություն չկա» (Օրմ. Ազգ. Բ 2108): Ահա այս էր պատճառը, որ էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական համագումարը Հայրապետական Աթոռի Աջմիածինի վերադարձի ճանապարհին, առաջին առելու համար հետագա անախորդությունների և աթոռախույս ձգտումների առողջ մտածումն ունեցավ Մուսարեկյանին հրավիրել Աջմիածին:

Էջմիածնի ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը «բաղում յարգութեամբ» դիմում է նրան. «Սմին իրի գրեցին եպիսկոպոսունք և վարդապետք առ Գրիգոր Մուսարեկյանց, և հրավիրեցին զալ լէջմիածին, եղեալ նմա առաջի բազում յարգութեամբ բազմապատիկ պատճառս»: Եվ երբ Մուսարեկյանց «այլ իբրև չետ յանձն զալ անդր, այնուհետև խորհցան առաջնորդք ազգին մեծ ժողով գումարել լէջմիածին, և ի ձեռն ժողովոյ վճարել վրուն: Ունէին իրեանց ձեռնուու և զմիածնես հայոց զրնակալս ի Հայաստան և ի Վրաստան. որոց միջնորդութեամբ հաճեցուցին և զալազգի իշանն երևանայ՝ որ կոչվոր Աղուր կամ եղալու պէկ. որպէսզի աներկիւզ կարասցին առնել զամագումարն ժողովոյն» (Չամշան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 486):

«Մուսարեկյան, հայոնի չէ թի ինչպիսի պատճառներով, չէ ուզած հնանալ Սիսին, և ասոր վրա է որ էջմիածնի ժողովին մեծ ձեռնարկած հն կաթողիկոսի ընտրության» (ԲԱԿ Պատմ. 1211):

Հստ Հ. Մ. Չամշանի Մուսարեկյանի ընտրությունը կատարվել էր «առանց հաւանութեան երկելի առաջնորդացն և Աթոռոց», իսկ ըստ Օրմանյանի՝ Մուսարեկյանց «նախորդին սպանությամբ և հետապնդողի մը գեմ մըրցելով հաշողած էր Հայրապետական Աթոռին տիրանալու... և էջմիածին երթալ շուզելով հրաժարյալ նկատվեցավ... և համակամ և համաձայն ազգային ժողով մը գաղրած կոչուակե Մուսարեկյանի կաթողիկոսությունը և Աթոռը զարդած ճանշալով նոր կաթողիկոս կրնտրեա:

«Վաղարշապատի ժողովը ազգին հանրության օրինավոր ներկայացուցիչն էր, յուր որոշումը վավերական եղավ օրինակով և կանոնով, հաստատու եղավ ու արդյունքով» (Օրմ. Ազգ. Բ 2014): Հայրապետական Աթոռի այս նոր շրջանի առաջին կաթողիկոսը եղավ Կիրակոս Վիրապեցին՝ «այլ տորը և բարեպաշտոն, հեղ և խոնարդ ի վասպուրականէ», որը մեծ շուքով և հանդիսությամբ 1441 թվականի Համբարձման տոնին օծվեց և բարձրացավ Լուսավորչի Գահին վրա:

Ժամանակի բովանդակ հայության և հոգևորականության զգացումն ու համզմունքն են

արտահայտվել 1442 թվականին ընդօրինակաված «Տամական»-ի հետագա հիշատակաբարանում, (գրիչ, Հովհաննես Թմոքվեցի, վայր՝ Այրարատյան գավառ, Սերկել գյուղ), ուր խոսվում է Հայրապետական Աթոռի վերաբարձի պատմական, համազգային նշանակության մասին:

«Այժմ բարձաւ անէծքն սուրբ Լուսաւոշի աղաւարին, որ էր բոլի կտակ եղծած և ջնջեալ, նորոգեցան Աթոռ Լուսաւոշին վերաբարձի, հինն էանց և եղեւ ամենայն ինչ նոր, հինն անէծքն էր նորս՝ աւրհնութիւն ի ձեռն սուրբ Հարանց, որ ժողովեցան յարևելից և յարևմտից, ի հարաւոյ և ի հիւսիսոյ ի Վարդուչս՝ ի նոր հաղաբան Վաղարշապատ՝ ի սուրբ Էջմիածինս, որ է մայր ամենայն եկեղեցեաց և ծնաւլ և լուսատու Հայոց Ազգիս։ Որ ի բազում ժամանակաց անտես արարեալ էին զնա և ինքեանք ի յԱստուծոյ անտեսացեալք էին, զի խնամք ողորմութեանն Աստոծոյ [վերա]ցեալ էր ի յԱզգէս, որպէս ասաց Աստուծ Մի մնասցէ Հոգի իմ ի դուսա, վասն թողլոյ դոցա զտոն իմ։ Խոկ այժմ շարժեալ ի գութ ողորմութեան արարին Աստուծ և ողորմեցաւ տառապեալ Ազգիս Հայոց, և ժողովեց բազում իմաստումն և առաքինին՝ բանիբուն վարդապետք, և ուղղափառ եպիսկոպոսք, և խարազնազգեստ կրօնատրք, և ողջախոն քահանայք, և սրբասէր աղտիք և ժողովորդք, որ ընտրեցին տեսլեամբ և կամաւք Ամենասուրբ Երրորդութեանն՝ զնեզն, զիսնարհն, վլմաստասէրն, որ ունէր գտեսականն և զգործնական առաքինութիւնն, ըստ Պղատոնի իմաստասէր կոշիմ ոչ զոգնագէտս և զայն, որ գոյն բազում ինչ ի բերան առնուլ, այլ զայն, որ անբիծ և անաղտ վարս ստացեալ ունին, որպէս հայր ապետ և մեր՝ Հոգեոր Տէր Կ[ի]լուակոս կաթողիկոս, որ յիւր ժամանակն ոչ միս է կերել, և ոչ գին[ի] խմել, և ոչ սուս ասել, և ոչ երդումն կերել, ոչ նզովք և անէծք ի բերանն է եղել։ Խէ (47) տարի է, որ յանապատի է և սուրբ կենդանաթաղ Խոր-Կիրապին սպասւ աւլորել (Խաչիկյան, «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, Ա. մաս, էջ 531—532):

1442 թվականին, Վան քաղաքում ընդօրինակաված «Ճամատրք»-ի հիշատակարանում (գրիչ՝ Կարապետ) գրվել է հետևյալը.

«Անարտեցաւ սուրբ գիրքս Յայսմատրացս յամի ՊՂԱ թուականութեանս Հայոց (1442), ձեռամբ յոգնամեղ գրչի Կարապետ երիցու, ի խնդրոյ մահեսի Միքարայ։ Եւ գրեցաւ գիրքս ի քաղաքս Վան, ընդ Հովանեաւ սուրբ առեքալոցս Պետրոսի և Պողոսի, և սուրբ Ստեփաննոս նախավկայի, և Սահակայ հայրապետի։ Որ ի յայս ամի եղեւ ժո-

ղով եպիսկոպոսաց և վարդապետաց ի մալրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց էր գոլիս մեծ բարունական Թովմայ և Յովհաննես կարդապետն։ և եղին զտէր Կիրակոս յէշմիածին՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց, և նոր սորոգեցաւ Աթոռ Սուրբ Լուսաւորչին Գրիգորի ըստ տեսլեանն մեծին Ներսէսի հայրապետին և Սահակայ Պարթևին, և մերոյս առաջնորդի սուրբ ուխտին Վարագայ Յովհաննես եպիսկոպոսին։ ի թագաւորութեան Զեանշանի, որ ի յայսմ ամի էառ զանառիկ բերդն Ըսել և զգուզամերկ (Խաչիկյան 536):

«...Հայնշահի թագավորության օրոք՝ 1441 թվականին Հայ Եկեղեցու կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն՝ Կաթողիկոսական Աթոռը Սսից տեղափոխվեց էջմիածին։

Կաթողիկոսական Աթոռը Արևելյան Հայաստան տեղափոխվելու ուղղությամբ հայ հոգեորականության որոշ շերտեր, հատկապես Սյունյաց մետրոպոլիտությունը, գործունեություն էին ծավալել դեռևս ժդ դարի վերջերին։

Այդ պլանների արգասիքը պետք է համարել Ստ. Օրբելյանի Շնորհ ի սուրբ Կաթողիկէին պոեմը, որի մեջ հեղինակը բաղձանք է հայտնուած էջմիածնում վերականնոնչած տեսնել ոզնաթու թագաւորին և զգաւազն պատրիարքին։

...1432 թվականին, Կաթողիկոսական Աթոռը էջմիածին տեղափոխելու պաշտոնական ձևակերպութից և Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելուց ինը տարի առաջ, Սյունյաց իշխան Բեշքենի որդի Ռուսաւամը էջմիածնին էր ովաճառել վեց մեծ գյուղ։ Այս մի վճռական քայլ էր Սյունյաց իշխանների կողմից էջմիածնը կաթողիկոսական նստավայր գարձնելու ուղղությամբ։ Նրանց կողմից առաջարկված կաթողիկոսացուն՝ Գրիգոր Մակվեցին, որի անունով էր ձեւակերպված ովաճառված կալվածների հանձնուամը վանքին, մինչև Կիրակոս Վիրապեցու ընտրությունը մի հիշատակարանում կոշվում է «Հայրապետ սուրբ էջմիածնի» (Խաչիկյան 522):

Կաթողիկոսական Աթոռը էջմիածին փոխադրելու նախաձեռնողները, անշուշտ, ունենալ բաղաբանական որոշ նեռանկարներ։ Պատմական Հայաստանի սրբում՝ Արարատյան դաշտում, վերահստատված «Հայրապետական Աթոռ» գյուրիյուն ունեցաղ պայմաններում պետք է նապատեր համահայկական կենարոն ստեղծելու գործին, պետք է որպէս շափով շաղկապեր միմյանց նայ ժողովրդի աշրեր բռնապետական իշխանությունների տակ ենծող նատվածները։

Հայրապետական Աթոռի փոխադրության առնշությամբ էջմիածնի ժողովի որոշման

նկատմամբ և նորընտիր Ամենայն Հայոց կաթողիկոս Կիրակոս Վիրապեցու հանդեպ Մուրաբեկյանցի կամ սաեցիների գիրքը ճշտելով, Բարգեն կաթողիկոս գրում է. «Գրիգոր Մուսաբեկյանը պիտի շարունակեր իր կաթողիկոսությունը մինչև իր վախճանումը և հետո նոր կաթողիկոս մը պիտի լրնտրվեր (Սսի համար), քանի որ անդին, էջմիածնի մեջ կաթողիկոսական Աթոռը վերահաստատված էր և նոր կաթողիկոս մը ընտրված, և կերպի թե ոչ միայն ինքն Մուսաբեկյան, այլ նաև Կիլիկիո եկեղեցականությունը ունեին այդ համացողությունը» (ԲԱԿ Պատմ. 1213):

Կանոնական տեսակետից այդպես էին մտածում բորոյ ժողովականները և այդպես էր մտածում նաև նորընտիր Ամենայն Հայոց կաթողիկոս Կիրակոս Վիրապեցին, որը հայրապետական իր առաջին կոնդակով Սիսր ազատում է բանադրանքից:

«Սըսայ կաթողիկոսունք, եպիսկոպոսունք, վարդապետք, քահանայք, սարկաւագունք և կրօնաւորք և ամենայն հաւատացեալք ի Քրիստոս Եղիշին օրհնեալք, և կապեալքն Եղիշին արձակեալք, և բանադրեալքն ազատեալք ի կապանաց մեղաց»:

Գրիգոր Տաթևացին էլ իր ժամանակ աշխատել էր ազատել Գրիգոր Դ Պահավունու օրով զատապարտված Աղթամարը Սև լեռան ժողովի բանադրանքից. «Ի սոյն ժամանակի ի խնդիր ելեալ վասն կապանաց Աղթամար և մեծահանքէս ժողով արարեալ արձակեաց զամբնեսեան Հնոց կաթողիկոսաց» (Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 52):

1441 թվականի ազգային-եկեղեցական համագումար ժողովը, ըստ հիշատակարանների, ոչ միայն Վերաբանորդութեց Լուսավորչի Աթոռը, այն վերադարձնելով իր «բնակ վայրութեալ այլ հաստատեց և հոչակեց Հայ Եկեղեցու Նվիրապետական միասնությունը: Արևելյան վրադասետներու բուն նպատակն էր ոչ միայն Կիլիկիո վտանգավոր միջավայրեն ազատել Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, այլև նաև Կաթողիկոսական միակ Աթոռու մը ունենալը» (ԲԱԿ Պատմ. 35):

Դժբախտաբար սակայն շուտով քանդվեց 1441 թվականի Վաղարշապատի ժողովում ստեղծված ազգային-եկեղեցական միասնությունը: Էջմիածնում սկսվեցին Աթոռի համար ամուլ պայքարներ վասպուրականցիների և սյունեցիների միջև: Վիրապեցին գահնենքց արվեց: «Աթոռի վերահաստատությունը անձնական կիրքերու հագուրդ տալու միջոց մը կդառնա» (ԲԱԿ Պատմ. 1214):

Այս հանգամանքը օգտագործում են ինչպես երկրի իշխող քաղաքական տերերը շահադիտական նպատակներով, այնպես էլ Կիլիկիայում մի շարք փառասեր հոգևորական-

ներ տիսուր փառասիրություններով, որոնք Մուսաբեկյանի մահից հինգ տարի հետո ուղղում են պահել Կաթողիկոսական Աթոռը Շիլիկիայում, որպես մասնավոր Կաթողիկոսություն և հնգամյա ընդհատումն կամ թափուրութենե հոգը Կարապետ Եղիոկիացի կաջորդի Մուսաբեկյանին, որուն կաթողիկոսությունը կճանչցվի, կհաստատվի Եղիպատուի 1214):

Կիլիկիո կաթողիկոսությունը սկսվում է հիմնականում Կարապետ Եղիոկիացիով (1446—1478 թթ.), Բարգեն կաթողիկոս, խորհրդածելով Կիլիկիո Աթոռի կազմության մասին, գրում է:

«Կիլիկիո կաթողիկոսության շարունակությունը Մուսաբեկյանի մահին ետք, իրբուողի հետևանք պատմական դեպքերու, ինքնին պետք մը դարձած է Կիլիկիո համար. քանի որ տիրող քաղաքական պայմաններն ալ կնպաստեին Կիլիկիացվոց, որոնք այդ միջոցին Եղիպատուի մելիքության տիրապետության ներքեւ ահազին դժվարություններ պիտի զգային նույնիսկ հոգեոր հարաբերություններ մշակելու Արևելյան Հայաստանի հեռավոր մեկ անկյունին հետ, որ ուրիշ բրոնապետության ներքեւ կտառապեր» (ԲԱԿ. Պատմ. 1214):

Սսի առաջին կաթողիկոս Կարապետ Եղիոկիացին աթոռակալում է 1446—1478 թվականներին: Թովմա Մեծոփեցին նրա մասին գրում է, որ Վիրապեցու կաթողիկոսության խառն ժամանակին Կիլիկիացիք «գտեալ երեց մի աշխարհիկ» Կարապետ անունով, հավանաբար շուշակ վարդապետ, «վասն հակառակութեան» նշանակում են կաթողիկոս: Զամշյան ավելացնում է հետեւյալը Եղիոկիացու մասին. «Ի մեռանել կաթողիկոսին Սոոյ՝ այն է Գրիգոր Մուսաբեկեանց, Կարապետ վարդապետ ոմն ի Սոոյ, որ ծեռնադրեալ էր եպիսկոպոս ի Կիրակոսէ, դիմեաց առ ամիրայն Կիլիկիոյ, որ էր ընդ իշխանութեամբն սուլտանին Եղիպատուի, և խոստացաւ վճարել նմա ամի երեք հազար դահեկան՝ էառ ի նմանէ իշխանութիւն կաթողիկոսութեան Սոոյ» (Զամշյան Գ 491):

Գրիգոր Դարանալեցին ևս գրում է, որ Կիլիկիացիք լսեցին Կիրակոս Վիրապեցուն պատահած անիրավությունը, ապստամբվեցին և որոշեցին բաժանվել «և եղին իւրեանց ինքնագլուխ կաթողիկոս... ասելով թէ՝ մեք վասն ամենագովիլ առնն Աստուծոյ Տէր Կիրակոս ճգնաւորին եղաք հնազանդ, յորժամ անիրաւութիւն արարիք. մեք անօրինաց և ապշտամբաց շեմք հնազանդ լինիլ, որ դեռ տակափն երկու ամ է որ լումք (Գրիգոր Դարանալեցի, «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, էջ 310):

Եվդոկիացին, ըստ Օրմանյանի, եղել է ռազմապիկ, գործունյա և մտավոր կարողության ալ տեր անձ մը» (Օրմ. Ազգ. թ 2140): Իսկ նրա երկարատև կաթողիկոսությունը իսղաղ շեղավ քաղաքականորեն և «ողբախտաբար պատմական որիշ տեղեկություններ կպահին» այն մասին, թե «ինչպես եղավ Սսի և էջմիածնի հարաբերությունները, Կարապետ ի՞նչ դիրք բռնեց հանդեպ էջմիածնի և էջմիածնի ի՞նչ դիրք բռնեց հանդեպ Սսի... Կիլիկյան Աթոռի իրավասությունը որչափ ամփոփեցավ, այսինքն որո՞նք եղան երկու Աթոռներում թեմական սահմանները» (ԲԱԿ Պատմ. 54):

Մայր Աթոռը Մակվեցի Գրիգոր Զալալբեկյանի օրով (1443—1465 թ. թ.) ակամահաշտվեց Կիլիկիայում ստեղծված կացության հետ և խոհականությամբ «ըռողոքեց, վճիռ շարձակեց Կարապետի նոր Աթոռ մը հաստատելու դեմ» (Օրմ. Ազգ. թ 2144):

Կարապետ Եվդոկիացուց հետո Սսի հաջորդ կաթողիկոսների կյանքի և գործունեության մասին շունենք պատմական ամբողջական տեղեկություններ: Մեզ հասած մի շարք հիշատակարաններ վկայում են, որ Սսի կաթողիկոսները ապրել և գործել են «շարադես» պայմաններում և աշխատել են պահել «իրենց ժողովորդը»: Ստեփանոս Սարածորցին (1478—1483 թ. թ.), «Սսի Աթոռը փայլեցնելու նպատակով և այն նորեն Ամենայն Հայոց Աթոռու դարձնելու համար» (Օրմանյան), «Բազում իրիք ջանացավ խափանել զկաթողիկոսութիւնն էջմիածնայ, բայց տեսեալ թէ ոչինչ կարէ, և խաղաղութիւն երկուց Աթոռոցն ևս վրդովի, դադարեցաւ ի շանիցն անտի» (Չամշան Գ 491):

Կիլիկյան Աթոռի հաջորդ հարապետների մեջ ուշագրավ դեմք է Հովհաննես Բ Թլկուրանցին (1489—1525 թ. թ.), որպես հայտնի տաղասաց և բանաստեղծ: Թլկուրանցին ծանոթ է ավելի որպես «տաղասաց քան կաքողիկոս»: Բանաստեղծ-կաթողիկոսը «գործունաց հոգերական մը եղած է և իր բանաստեղծի խառնվածքին ավելուցած է իր հոգեր պաշտոնի հմայակը» (ԲԱԿ Պատմ. 76), բայց, ավելացնում է Օրմանյանը, «Կիլիկիո Աթոռը ի՞նչ օգուտ քաղց աշուղ կաթողիկունին, կամ թէ Թլկուրանցին ի՞նչ արդյունքներ ընձեռեց Հայ Եկեղեցին... մեզի անհայտ կմնան» (Օրմ. Ազգ. թ 2211):

Իրապես ցավալի է, որ շունինք պատմական հարուստ տեղեկություններ Սսի Հովհաննես Գ Քիլիսցի, Կայժակն մականվանյալ (1525—1539 թ. թ.), Սիմեոն Ա Զեյթունցի (1539—1545 թ. թ.), Ղազար Անթեացի (1545—1547 թ. թ.), Թորոս Ա Սսեցի (1548—1550 թ. թ.), Խաչատուր Ա Զորիկ (1550—1560 թ. թ.), Խաչատուր Բ Զեյթունցի (1560—

1684 թ. թ.) կաթողիկոսների մասին, որոնք ավելի խաղալիք են դառնում ժամանակի քաղաքական վերիվայրումներին քան արդյունավետությամբ ղեկավարում Եկեղեցուն և ժողովրդին: Սսի այս կաթողիկոսների «ունեցած ազգային եղելությունները մեծ և կարևոր բան մը չեն ներկայացներ» (Օրմ. Ազգ. թ 2259): Տվյալ ժամանակաշրջանի կաթողիկոսներից ոմանք իրենց «դիրքին ու աստիճանին մարդը չէին», եկեղեցականությունը պերճանքի և պաճուճանքի զակատեր է, ոմոնալով հոգերուականի վայել պարզ կենցաղի պայմաններն ու հոգելոր հովվին պարտավորությունները» (ԲԱԿ Պատմ. 136—138), թեև եկեղեցականներից և կաթողիկոսներից ոմանք էլ ունեցել են «ճնազգեցիկ կենցաղ»:

ԺԶ—ԺԷ դարի կիլիկյան կաթողիկոսների մեջ իր գործունեությամբ և վաստակով կարևոր տեղ է գրավում Ազարիա Զուղայեցին (1584—1601 թ. թ.), «որուն կյանքը անդադրում գործունեություն մը եղած է, իրեն ուսուցի և կաթողիկոս և որպես պայծառ դեմք՝ Հայ Եկեղեցի իրեն ժամանակակից նշանավոր վարդապետներու շարքին թե՛ իր գիտությամբ և թե՛ իր կաթողիկոսական բազմերանք գործունեությամբ» (ԲԱԿ Պատմ. 150—151): Զեռագիր հիշատակարաններում նա անվանվել է «քաջ րարունապետ, ուսուցիչ և խրատիչ ամենայն հաւատացելոց քրիստոնէց»:

Զուղայեցին համազգային հանգանակությամբ վճարել է երուսաղեմի հայոց Պատրիարքության պարտքը՝ «Վասն երուսաղեմայ պարտուցն... գնացի ի Հին Զուղա»: Նա շարունակել է նաև իր նախորդի՝ Խաչատուր Բ-ի օրով վերսկսած Հայ և կաթողիկ Եկեղեցների հարաբերությունները:

Զուղայեցու օրով Հոռոմի Գրիգոր ԺԴ պապը (1571—1595 թ. թ.) նորից առաջ է քաշում Կաթոլիկ Եկեղեցու և արևելյան եկեղեցիների միության հարցը: Պապի ներկայացուցիչը՝ Սիոնին Լեռնարդը Արել եպիսկոպոսը գալիս է Կիլիկիա և Սսոմ ու Հալեպում բանակցություններ վարում նախ Խաչատուր Բ և ապա Ազարիա Զուղայեցի կաթողիկոսների հետ: Պապական նվիրակն իր բանակցությունների արդյունքը հաղորդում է Վատիկան 1587 թվականի ապրիլին:

«Իսկ պապական նվիրակ Լեռնարդո, որ Արևելքի քաղաքական վրդովմունքներուն պատճառով շկրցավ երթալ էջմիածին, թըղթակցությամբ կմշակեր իր հարաբերությունը Գրիգոր ԺԲ-ի աթոռակից Առաքել Ա-ի հետ:

Պապերու հետ այս բոլոր հարաբերություններուն նպատակը շատ պարզ էր, այսինքն մերձենալ Հոռոմի Եկեղեցվույն, ամեն համար-

վոր զիշումներն ընկելով, և աղոր փոխարեն քաղաքական շահ մը ապահովել հայ ժողովորդի օգտին, որ հավասարապես կհարցուածարվեր թե՛ Կիլիկիո և թե՛ Հայաստանի մեջ:

Հոռոմ կշահագործեր հայ ժողովուրդին այս հարստահարյալ կացությունը և Հայաստանյաց Եկեղեցվոր միացումը պայման կդներ, իրմի ակնկալված օգնությունները շնորհելու համար, օգնությունները, որ անշուշտ շափանցորեն կդնահատվեին տառապայլալ ժողովորդի մը առաջնորդներուն հրեակայությանը մեջ:

Խաշատուր Բ և Զուլայեցին, այո, հարաբերություններ մշակեցին Հռոմի հետ, նամակներ գրեցին, դավանարանական խնդիրներու մեջ ըրին հնարավոր զիշումները, ոչ թե Հռոմի Եկեղեցվույն ուղղափառության նոր ապացուցներ ատալու համար, այլ պարզապես իրենց ժողովորդին քաղաքական կացությունը բարվոքելու համար, և Հռոմի հմայիլ անվանու զորության հրաշքները տեսնելու հույսի րով:

Խաշատուր Բ-ի և Զուլայեցիի կողմե Հռոմ ուղղված գրություններ պահված են Վատիկանի մատենադարանին մեջ:

Սպարիա Զուլայեցին իրեւ ուղղափառ և հավատարիմ վարդապետ Հայաստանյաց Եկեղեցվոր, իրեն արժանի տեղը տալու համար Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռին վրա Հռոմի հետ իր մշակած հարաբերություններու մեջ, շատ զորշավոր եղած է և միայն աշխատած է օգտվիլ որևէ կերպով պապական իշխանության ճոխութենեն և դրություններն, ինչպես որ կտեսնվի իր վավերական մեկ գրութիւնն, զոր ուղած է Գրիգոր ԺԳ պապին:

Խնձես կտեսնվի առ Գրիգոր ԺԳ պապ ուղղված նամակին ամփոփումեն, Ազարիա Հնարավոր զիշումները ըրած է Վատիկանին՝ անկից քաղաքականապես և նյութապես օգարվելու հույսերով, և փորձի համար ալ միայն հայերեն Աստվածածուն մը տպագրելու առաջարկը ըրած է պապին, այլ նաև քանի մը տղա դրկած է որ Կրթվին, իհարկի այն նախատեսությամբ, որ անոնք սորովելով տիրող լեզուն և ուսումնասիրելով Հռոմի Եկեղեցին և պապությունը, օգտակար ծառայություններ պիտի ընեին Կիլիկիո Կաթողիկոսարանին մեջ:

Թե ի՞նչ եղավ այս խնդրանքներուն արդյունքը, այդ մասին լուս է պատմությունը, և այդ լուսությունը նշանակալից է ինքնին, այսինքն Լեռնարդոյի պատմությունները Վատիկանի ուժին և հնարավորության մասին իր ըրած խոստումները հարստահարյալ հայության վիճակը բարվոքելու կողմեն, հարկավ Ազարիայի և իր հպիսկոպոսներուն բեր-

նին ջուրերը վազել տվին, բայց իրականության մեջ Վատիկան հայերեն Աստվածաշունչ միսկ լւրցավ տպագրել, և Անթեպցի Հովհաննես եպիսկոպոս և Գրիգոր սարկավագ թերես նոր խոստումներով և եկեղեցական նվերներով վերաբարձան Կիլիկիա, ըստ անուններու համար բոլորովին ձեռնումայն և հուսիսար:

Ահավասիկ բոլոր արժեքը և արդյունքը Ազարիա Զուլայեցիի Վատիկանի հետ մշակած հարաբերություններուն (ԲԱԿ Պատմ. 168—187):

Զուլայեցու հաշորդ սսական կաթողիկոսների մեջ շնորհքով պատրաստված կրոնապետ» է եղել Հովհաննես Դ Անթեպցին (1602—1621 թ. թ.), «իր շեշտված հոգնոր նկարագրով, իրեւ գրքի ու գրի մարդ, իրեւ բազմաշակերտ ուսուցիչ, իրեւ գործունյա առաջնորդ իր պաշտոնին եկեղեցական և վարչական ճյուղերուն մեջ (ԲԱԿ Պատմ. 199): Ժամանակակիցները նրան անվանել են «երաժիշտ և բարձրաբարբառ քարոզիչ տիեզերաց, քաջ և անհաղթ փիլիսոփա»:

Անթեպցու օրով, Հալեպում, Պետրոս Կարկառեցու կաթողիկոսացումով Կիլիկիան Աթոռոր երկինքկվում և բաժանվում է երկուակի: Վատանգը լուրջ էր, որովհետեւ Կարկառեցին ժամանակի նշանավոր վարդապետներից մեկն էր և աշակից ու գործակից Ազարիա Զուլայեցու Պետրոսի վախճանումով, բարեբախտաբար, վերջ է գոնում եկեղեցական «երկպառակություն»:

Հատկապես ԺԳ և Ժէ դարերում, էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի և Սսի Կաթողիկոսական Աթոռի միջև սկսվում են կաթողիկոսական իրավասությանց սահմանների և հպիսկոպոսական ձեռնադրությանց վերաբերյալ վեճեր, որոնք առանձնապես սուր բնույթ են ստանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Փիլիպոս Ազբակեցու (1633—1653 թ. թ.) և Սսի Սիմեոն Բ Սեբաստացի (1633—1648 թ. թ.) կաթողիկոսի օրով:

«Կաթողիկոսական Աթոռին էջմիածնի մեջ վերանորոգումն (1441 թ.) հետո խնդիրներ ու կնճեմներ պակաս չեղան երկու Աթոռներուն միշեւ, անոնց թեմական իրավասությանց կողմեն: Եվ դիմավոր գժվարությունը կդառնար ձեռնադրությանց շորջու: Հայրապետական Աթոռի Ս. էջմիածին վերաբարձից հետո էլ Կիլիկիայի կաթողիկոսները փորձում էին իրենց «իրավասությունն» ընդարձակել և «ձեռնադրություն կատարել էջմիածնի թեմին պատկանող թեկնածուներու վրա, մասնավորապես հպիսկոպոսական ձեռնադրություն: Էջմիածին կպնդեր, թե Սսի կաթողիկոսները իրավասու չեն. իսկ անոնք, ընդհակառակը, տարբեր կերպով կը բռնին կացությունը, հիմնվելով 1441-ին առաջ տի-

ըող ավանդության վրա: Եվ այս կետին վրա կիլիկեցիք իրավունք չունեին, որովհետև իրաց վիճակը փոխված էր բոլորովին: Էջմիածին Մայր Աթոռ ճանչված էր և ան իրավունք ուներ պահանջել Կիլիկիո Աթոռուն, որ իր սահմաններեն անդին շանցնի ձեռնադրության խնդրին մեջ» (ԹԱԿ Պատմ. 313):

«Կարելի էլ հաստատել, թե Սուսարեկյանի և Վիրապեցիի հաջորդներուն ժամանակ խնդրին հոգված ըրլան երկու Աթոռներուն մեջ, քանի որ Սիս իր իրավասության ներքև պիտի պահեր Կիլիկիո սահմանակից հայարնակ երկիրները. իսկ էջմիածին, իշրու Աթոռ Ամենայն Հայոց Կաթողիկոսության, իր իրավասության տակ պիտի հոշակեր Կիլիկիո սահմաններեն դուրս այս երկիրները» (ԹԱԿ Պատմ. 1213):

«Մանոթ են արդեն,— զրում է Օրմանյան սրբազնը,— երկու Կաթողիկոսական Աթոռները Աղթամարի և Սսի մեջ, որոնք հակառակության կերպարանի ներքև սկսան, սակայն օրինավորության կերպարան առածէին, Աղթամար՝ Վիրապեցիին օրնությամբ և Սիս՝ սկիզբն իրեն դեմ վճիռ շտրվելով, որով հանրության կողմեն ընդունված Աթոռներ էին: Երկուքին ալ սահմանները ոչ սկզբեմ և ոչ հետո որոշ գծված չէին, և քաղաքական տիրապետությանց համեմատ կփոխվեին իրավասությանց վիճակները, վերջապես՝ Մայր Աթոռի անկարգ անկանոն կացությունը, մանավանդ վերջին ժամանակներու մեջ, համարձակություն տվեր էին մյուս Աթոռներուն ուզաննուն պես գործել և ուզած կողմերուն համար հպիսկոպոսներ ձեռնադրել: Սիմեոն Սերաստացի, որ 1633-ին Կիլիկիո Կաթողիկոս էր հղած, ևս առավել կընդարձակեր յուր ձեռնարկները և ձեռնադրությունները» (Օրմ. թ 1441—1445):

1633 թվականին Սսի Սիմեոն Բ Սերաստացի կաթողիկոսը Կոստանդնուպոլսից Սիս իր վերաբարձի ճանապարհին հանդիպում է Անկյուրիս (Անկարա) և Թորոս անուն մի վարդապետի եպիսկոպոսի ձեռնադրում: Անկյուրիսին էջմիածնի թեմ էր Թիմում այս ձեռնադրության առիվ ճիսուպություն կծագի: Կոստանդնուպոլսի Դրիգոր Կեսարացի պատրիարքը, որը թեև Սիմեոն Սերաստացու էլ բարեկամն էր և սերտ հարաբերություններ էր պահում Կիլիկիո Աթոռի հետ, իր դժությունը հայտնում է Սիմեոնի դեմ և միաժամանակ որպես ի պաշտոնի «էջմիածնի վերի և երեսփոխան», ինչպես նա գրում է իր մասին, հարցը ներկայացնում է Փիլիպոս կաթողիկոսին: Վերջինս, որպես նախանձախղի Հայոց պատրիարք էջմիածնի կանոնական իրավասությանց ու զերծ պաշտպանը կարգ ու կանոն, Թորոս եպիսկոպոսին կախակայում է, իսկ Սսի Սիմեոն կաթողիկոսին ուղղում է մի «դիտողագիր», մեղա-

դրելով նրան տաղիկամի և յուր իրավասության վիճակներն դուրս ձեռնադրություն կատարելու մեջ»:

Փիլիպոս կաթողիկոսը՝ իր թուղթը որպես ըղոդանրական նամակ և քարտեզ» ուղղում է «առ ամենայն արմենակու խումբսն, որ յաշխարհս Կիլիկիա, և Սիս և ի Թերիս քաղաքի», այսինքն Կիլիկիայի ամբողջ ժողովրդին և հոգևորականության:

Դժբախտաբար մեզ չի հասել Փիլիպոս կաթողիկոսի պատմական մեծ արժեք ներկայացնող այս կանոնական թուղթը: Նամակի բովանդակության և նշանակության վերաբերյալ որոշ տեղեկություններ քաղվում են Սսի Սիմեոն կաթողիկոսի պատասխանագրից: Պարզ է, որ Ամենայն Հայոց Հայրապետին համար մեջության հարցը երկու Աթոռներու մեծության վրա կհանդիպի: Փիլիպոս կաթողիկոսը Մայր Աթոռ էջմիածնի գերագաճ և գլխավոր Աթոռ լինելը պաշտպանելիս ապանդական, պատմական, կանոնական անհերթելի փաստերից բացի դիմում է նաև փիլիսոփայական փաստարկումների, «սեփի և տիսակի և անհատի» փոխարքերությունների, եզրակացնելով փիլիսոփայորեն, որ «մասունքն ի հանուրեն տեսանին, քայլ ոչ հանուրեն ի մասունք»: Փիլիպոս կաթողիկոսը փաստարկում է, որ Ս. էջմիածնին առաջ է և Սիսը վերջին, Ս. էջմիածնին գործի է Սիսը՝ մասունք:

Սիմեոն Սերաստացին իր պատասխանագրի մեջ, որը հասել է մեզ, 1634 թվականին, «Ճամապարհ սկսելով, կաթողիկոսներու շաղթեն քաղվածք մը առջև կդնի, ոչ ճիշտ թվերով և թվականներով, հետևածնելու համար, թե «մինչև ցայսօր կայ Հայրապետությին հաստատ աստ (ի Սիս), և Ա. Լուսաւորչի Աշն աստ, զի ի սմա բնակեցաւ, զի հանեցաւ ընդ սա»:

Օրմանյան Սրբազնը Սսի Սիմեոն կաթողիկոս Սերաստացու այս հայտարարությունը իրավացիորեն գնահատում է որպես «կիլիկիցիներու հավակնություն մերթ ընդ մերթ երևան եկող հայտարարություն, որ հերքվելու իսկ պետք չունի, զի պատմական պարագաները շատ որոշ են այդ մասին» (Օրմ. Ազգ. թ 2447):

Կիլիկիյան կաթողիկոսների պատմությունը գրող մեծահմուտ Բարգեն կաթողիկոսը ևս, քննության առնելով Սսի Կաթողիկոսական Աթոռի կանոնականության և լուսավորչից «ուղղագիր» հաջորդության և Ծնորհալու Աթոռ լինելու հարցը, գրում է:

«Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին կանոնականությունը պաշտպանելու համար միշտ պատմական սխալ բացարություններ և փաստեր քըլած են անվախ՝ թե՛ նույնինքն Կիլիկիո հին և նոր կաթողիկոսներու կողմեն և թե՛ Կիլիկիո Աթոռը պաշտպանել

ուզողներու կողմեն ընդգեմ աղոր հակառակ էցմիածնի կաթողիկոսներուն և ընդդեմ նաև անոնց ջատագովներուն...

Անոնք որ ըսին Կիլիկիի Աթոռը ուղղակի Ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական գիծին շարունակությունն է կամ Շնորհալիի կաթողիկոսության հաջորդությունը, այսպիսինները տարակույս կամ որ ստույգ պատմութեննեն ավելի պատմական զեպերու երևույթներով ոգենորվեցան. վասնզի Լուսավորչի կաթողիկոսության շարունակությունը, բառին կանոնագիտական առումով, եթե տեղի հնու կապվի, էջմիածնեն դուրս պետք չէ ելլե. իսկ եթե կաթողիկոսական հշխանության փոխանցումի իմաստով պիտի առնվի շարունակությունը, այդ պարագային բոլոր կաթողիկոսներն ալ, որ Լուսավորչի կաթողիկոսության հաջորդության շղթան կազմեն, օրինավոր կաթողիկոսներ են, առանց կապվելու տեղին և ժամանակի:

...Պատմության այս լույսերուն տակ Կիլիկիի Կաթողիկոսությունը աշխարհագրական և տեղագրական առումներով մի կրնար Շնորհալիի հաջորդությունը ըլլալ. որովհետև Սիս չէ եղած Շնորհալիի նստոցը (ԲԱԿ Պատմ. 17, 19):

Փիլիպոս կաթողիկոսին ուղղված Սիմեոն Սերաստացու պատասխան նամակը ռանսպասիլի էր, ոճը՝ «անվայել կոնդակներու համար», ինչ որ ցույց կտա նրա անիրավ լինելը, «կարի հանդուզն, չիմ կամիր ըսիլ լրբենի լիզվով գրված պատասխան մը».— գրում է իզմիրյան սրբազնը, «Հայրապետություն Հայոց և Ալթամար ու Սիս» աշխատության մեջ (Կոստանդնոպոլիս, 1889 թ. էջ 437—438), «որ ամեն բարեպաշտից և ազգասիրաց արդար զայրույթը կշարժե»:

Փիլիպոս կաթողիկոս խոհականությամբ վարված է խնդիրը շարծարծելով ու պայմանը լրբերութելով, համոզված ըլլալով, թա այսպիսի բնավորության և լիզվագրության տեր մեկու մը հետ հնար չեր խոսք հասկնալ և բարեկարգական կանոններու վրա համոզում գոյացնելու»:

Փիլիպոս կաթողիկոսը այսուհետև երկու Աթոռների փոխհարեւրությունը բարեկարգելու և հակառակության պատճառները վերացնելու համար, գրում է երուսաղեմի Գրիգոր Պարոնտեր Գանձակցի պատրիարքին (1613—1645 թ. թ.), որպեսզի նա «զատատատառ» անի երկու Աթոռների միջև: 1628 թվականին Սիմեոն Սերաստացին Հարության Զատկի տոնին ուխտավորաբար գտնվում էր երուսաղեմում: Գրիգոր Պարոնտեր պատրիարքը, օգտվելով առիթից, միշտ շամտում է, որ վերջ տրվի լարված կացության: Սիմեոն Սերաստացին հավանում է և իսկ ձեռքով մի թուղթ է գրում և խոստանում «ոչ ևս դեռ ի վերայ բահա-

նայի և եպիսկոպոսի պրտաքու եղելոց ի վիճակի իրում, նոյնպէս Կաթողիկոսն Ս. Էջմիածնի, ասէ, մի ձեռնադրուցէ զոք, որ շիցէ ընդ իշխանութեամբ իւրոյ վիճակի: Եւ եթէ ոք յեկեղեցականաց զասուէ եկեցէ ի վիճակ մեր, հիւրասիրութեամբ մեծարացն, և թողցի նմա ժողովի կամաւոր նույրու ողորմութեամբ. նոյնպէս և որոց առ ի մէնչ ի վիճակս Ս. Էջմիածնի երթիցն, նովին սիրով և պատճառով ընկալցին: Սակայն մի բնդդէմ իւրաքանչիւր ասանդութեանց յեկեղեցական արարողութիւնս ձեռներէց լիցի փոխել զնուա»:

Այս թուղթը ստորագրում են նաև Գրիգոր Պարոնտեր պատրիարքը, Տփղիսիցի Հակոբ, Մոկացի Կապատի, Սերաստացի Նիրսնու և պիտիկոսները և ուխտավորաբար երուսաղեմում զանվող բահանաներ, մահտեսիներ, խոջաներ, որոնք ներկա են զանվել նաև ժողովին: Մայր Աթոռով Երուսաղեմի այս ժողովում ներկայացուցիչ չի ունեցել, այնուամենայնիվ պատմական այս թուղթը ուղարկվում է Ս. Էջմիածնին և Փիլիպոս կաթողիկոսն ընդունում է այն (Տ. Սավալանյան, «Պատմութիւն երուսաղեմի», ձեռագիր, էջ 699—700. հմատ. Մեսրոպ հպիսկոպոս Նշանյանի աշխարհաբար թարգմանության հիտ, էջ 587—588):

Այնուամենայնիվ երկու Աթոռների հարաբերությունները չեն բարեկարգվում մինչև երուսաղեմի երկորդ ժողովը, որը տեղի է ունենում 1651 թվականին՝ Փիլիպոս կաթողիկոսի նախագահությամբ:

Սակայն Աթոռի վրա Սիմեոն Սերաստացուն հայորդում է նիրսնու Սերաստացին (1648—1654 թ. թ.), «զամենայն կրթութիւն և վարժումն մանր երգոց երաժշտականութեան» և «ընթերցումն Աստուածաշունչ Գրոց» տիրացած, «Ճշմարտութեան իրաւացն Աստուծոյ շատագով», «սրբասէր» (Պարանաղի, էջ 337) կաթողիկոս, որն «ավելի խաղաղասիր և խոհական զարդարաներու տեր անձ մըն էր և բարեկեցիկ հարաբերությանց պետք կդպար» (Օրմ. Ազգ. թ 2453):

Փիլիպոսի և նիրսնու օրով փոխադարձակացողության և սիրալիր համագործակցության մի շինարար մթնոլորտ է ստեղծվում Մայր Աթոռի և Սակ միջև:

Երկու Աթոռների նախակինում սրված հարաբերությունների բարեկարգումը պայմանապատճույց է Փիլիպոս և նիրսնու կաթողիկոսների խոհում վարչագիտության և ազգասիրության, որը փառավորապես արտահայտվեց 1651 թվականին, Երուսաղեմի ժողովում:

«Երկու Աթոռներուն միջև տիրող անհակացողությունները ու հակառակությունը

չէր կրնար երկար տևել և պետք չէր որ տևեր» (ԲԱԿ Պատմ. 343):

Սիմեոնի վախճանումից հետո, ներսես Սեբաստացին, որպես իրոք խոհեմ և հեռատես հայրապետ, զգում էր, որ հնարավոր չէր Սիմեոն կաթողիկոսի մատայնությամբ և մեթոդով կարգադրել վիճելի և Հայ նկաղօցու ու ժողովրդի գերագույն շահերը շոշափող հարցերը: Նպաստավոր էին նաև ժամանակի քաղաքական պայմանները: Երկար կոփէներից հետո, օսմանցիների և պարսիկների միջն տիրում էր երկարատև զինադադարի մի շրջան: Փիլիպոս Աղքակեցին, օգտվելով առիթոց, ցանկանում է Հայեպ-Երուսաղեմ գծով գնալ Կոստանդնուպոլիս, վերց տալու համար հայոց Պատրիարքական Աթոռի շուրջը ստեղծված գրգռւթյուններին, հոգուամներին և կաթոլիկների կողմից ստեղծված ազգային եկեղեցական պարակտումներին:

Կոնստանդնուպոլիսի հայությունը, լսելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղևորության մասին, կարգադրում է պարտ ու պատշաճ՝ համազգային հանդիսությամբ ընդունելու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնաբեր, պատմական այցելությունը: Օսմանյան կառավարությունը հրահանգում է, որ «ցորչափ կաթողիկոսը օսմանյան հողի վրա գտնվի, պարտ ու պատշաճ հարգանքը ընծայմի տեղական իշխանության կողմէ և անոր մոռնշանակի թագավորական ծառա, ի գրպանե թագավորին»:

Ամենայն Հայոց Հայրապետի այցը Հալեպ՝ Սսի Աթոռին՝ պատմական մեծ իրադարձություն էր Հայ եկեղեցու պատմության մեջ: Փիլիպոս կաթողիկոսը Հայոց հասաւ իր շքախմբով և այնտեղ հանդիպեց Սսի ներսես կաթողիկոսին: Երկու հայրապետները, իրենց հետևորդներով միասին, ումատի գնացին Ս. Երուսաղեմ, Զատկի տոնի առթիվ, 1651 թվականին:

Հալեպում երկու կաթողիկոսների հանդիպումը, նրանց միասին ուխտագնացությունը Երուսաղեմ երբեք էլ պատմականություն չէր, այլ, ինչպես ճիշտ կերպով նշում է Թարգեն կաթողիկոսը, «երկու կաթողիկոսներու կողմէ հառաջագույն ծրագրված՝ անշուշտ թղթակցություններե և հասկացողության մը գալ հետո»:

Դրիմեցի Մարտիրոս վարդապետի վկայությամբ Երուսաղեմի ժողովին ներկա էին Փիլիպոս և Ներսես կաթողիկոսները, Երուսաղեմի Աստվածառուր պատրիարքը (1645—1664 թ. թ.), որը ժամանակի նշանակոր դեմքերից էր և աշխատում էր հաշտարար գեր խաղալ հայ ժողովրդի եկեղեցական միասնությունը ջլատող երկարակությունների մեջ, 7 եպիսկոպոսներ, 18 վար-

դապետներ, 35 կրոնավորներ: Ժողովին ներկա են եղել նաև բայց ձայն չեն ունեցել 60 քահանաներ, մեծ թվով ուխտավորներ, մոտավորապես 1000 հոգի:

Երուսաղեմի ժողովի գումարման, ժողովի օրակարգի, տևողության և այլ կարեւո հարցերի մասին սպառի տեղեկություններ չունենք: Կարեւը, սակայն, Երուսաղեմի ժողովի նշանակությունն է: Ժողովի գլխաւոր նպատակը եղել է սակա և միաբանութիւն երկուց Աթոռոց կաթողիկոսութեանն էջմիածնի և Սսոյի, — ինչպես վկայում է Հայերնասեր պատմիչ Առաքել Դավիթիծեցին («Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 250):

Դավլիթեցին, որ Երուսաղեմի ժողովի մասին խոսող առաջին պատմագիրն է և որն անձամբ ճանաչում էր երկու կաթողիկոսներին, գրում է միայն ժողովի եղանակացումներին: Կարեւը, որ «հանուր ժողովն գումարեալ եկեղեցականք և աշխարհականք... միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս հայրապետին Փիլիպոսի և հաստատեցին կանոնական բանս երեքտասահն գլուխ, զորս համապոտիւ նշանակեցից աստէն, որոց առաջինն:

1. Յուրաքանչյուր Կաթողիկոսական Աթոռ յուր վիճակայինը եպիսկոպոս ձեռնադրե, յուր վիճականերուն համար: Եթե յուր վիճակային չեղողը ձեռնադրե, յուր վիճակին մեջ տեղավորե, և մեկուն ձեռնադրածը մյուս Աթոռին մեջ անընդունելի լիցի: Այս կանոնն է, որուն զորությամբ Կիլիկիա ձեռնադրված եպիսկոպուները էջմիածնի վիճակին երուն մեջ վարչական պաշտոնի չեն կոչվիր, բայց եթե էջմիածնի Աթոռին պաշտոնապես միաբանելով:

2. Մեկ Աթոռին ձեռնադրվածը մյուս Աթոռին դիմել մի՛ համարձակեսցի:

3. Առանց ժողովուրդի խնդրանքին և առանց վկայականի մի՛ ձեռնադրեսցի ո՛ք յեպիսկոպութիւն:

4. Որևէ պատճառով եպիսկոպոս մը ուրիշ եպիսկոպոսի մը վիճակը մի՛ յափշտակեսցի:

5. Մեկ վիճակի վրա երկու եպիսկոպոս կամ երկու առաջնորդ լրլա, բայց թէ կարի մեծ ինչ պատճառ ի մէջ գայցէ: Հստ այս թեմակալի մը կենդանության ուրիշ թեմակալ պիտի չձեռնադրվի, բայց եթե առաջինը հեռանա, կամ ժանր պատճառով մը հեռացմէ:

6. Եպիսկոպուսներ իրենց վիճակայինը շեղողը չձեռնադրեն, և եթե համարձակին, լուծցին ինքն և իւր ձեռնադրեալն, որ է ըսել եպիսկոպոսը թեմակալութենեն զրկվի և ձեռնադրված քահանան շկարողանա քահանայություն ընել: Այդ գլուխը այնպես պետք

է իմանալ, որ եպիսկոպոսը ուրիշ վիճակի համար բահանա չձեռնադրե, և եթե ոչ վիճակայինը ձեռնադրե՝ իր վիճակին մեջ տեղափորե:

7. Եպիսկոպոս մը, որ առանց կաթողիկոսի հրամանին կաշառօք և այլազգեաց բռնորեամբ վիճակի մը տիրանա, լուծի ի կարգեն:

8. Մեծ վարդապետը ուրիշի իշխանութիւն վարդապետութեան շտա, եթե նվիրյալը ալլա կատարեալ ուսմամբ և առաջինութեամբ և հասակաւ աստուածային երկիրի և վկայեալ յամենեցունց: Հայտնի է, թե վարդապետություն տալու իշխանությունը օրինոք մեծ վարդապետներունն էր, և ոչ հպիսկոպոսներուն, զի ուսումնական աստիճան էր և ոչ եկեղեցական ձեռնադրություն: Այժմյան սովորությամբ կպահանջվի, որ տվողը եպիսկոպոս և ծայրագույն վարդապետ հղած ըլլա միանգամայն: Խսկ ընծայալին համար դիտելի են շորս պայմաններ. ուսումն, առաքինություն, տարիք և օրինավոր վկայություն:

Երուսաղեմի ժողովի 9—13-րդ կանոնները խոսում են եկեղեցական բարեկարգական այլ հարցերի մասին ընդհանրապես և կապ չունեն եպիսկոպոսական ձեռնադրության և Աթոռների իրավասության վերաբերյալ հարցերի համար:

Ինչպես երկում է Դավրիմեցու վկայությունից, Երուսաղեմի ժողովի որոշումները կամ կանոնագիրը ստորագրում, վավերացնում են երկու կաթողիկոսները, Աստվածատուր պատրիարքը, ժողովում ներկա վարդապետներն ու եպիսկոպոսները, ինչպես նաև իշխաններ և տանում են իրենց հետ, որպես պատմական, կանոնական մեծ փաստաթուր, երանել առաջնորդվելու համար հետագայում: Երուսաղեմի ժողովը սկսեց խաղաղության մեջ և վերջացավ խաղաղությամբ: 1651 թվականի Զատիկիը տոնվեց Երուսաղեմում համազգային շուրջով և համաճայկական կրկին ցնծությամբ:

Երուսաղեմի ժողովից հետո երկու կաթողիկոսները միմյանցից բաժանվեցին սիրով և հարգանքով, ազգային և եկեղեցական մեծ նշանակություն ունեցող հարցերը հաշողությամբ և հօգուտ եկեղեցուն և ժողովրդին լուծված տեսնելու արդար միմիթարությամբ: Փիլիպոս Աղքակեցին մեկնեց Կոստանդնուպոլիս, իսկ ներսիս Սեբաստացին վերադարձավ իր Աթոռը և վախճանվեց 1654 թվականին խաղաղասեր, հոգեսեր և ազիկ կաթողիկոսի բարի հիշատակով:

Պատմական շատ քիչ տեղեկություններ ունենք ներսեսի հաջորդ Սահ Թորոս (1654—1657 թ. թ.) «առաքինի և սրբակենցաղ» կաթողիկոսի, «հայ ժողովուրդի աղ-

գալին ազատագրության տեսիլով աշխեռը չոռմ դարձուցած և լատինասեր կուսակցության գործի հիշատակ վաստակած և իր անխոհեմ ու վտանգավոր քայլերուն պատճառով Կիլիկիայում մի շաբթ հակաթոռները ստեղծելու պատճառ դարձած Խաչառական մասին:

1663 թվին Սահ Խաչառուր գ Դաղատացի կաթողիկոսի համաձայնությամբ և օժանդակությամբ Եղիազար Անթեպցի եպիսկոպոսը փորձում է Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ամբողջ շրջանների համար Երուսաղեմում ստեղծել եղմածնից անկախ հակաթոռ կաթողիկոսություն՝ «Կիլիկիո աթոռին շղիպչելով և անոր թողլով որչափ ինչ արդեն անոր կապտականը» (Օրմ. Աղդ. թ 2651):

1664 թվին Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում Եղիազար կաթողիկոս է ձեռնադրվում Խաչառուր Գ-ի ձեռքով և «օրհնության կոնդակ» է ուղարկում բոլոր արևմտահայ թեմերին, Խաչառուրի թեմերից գուրու Անթեպցու հակաթոռությունը առաջ է բերում բողոքներ և բուռն վեճ, երկպառակություն: Ժողովուրդը բաժանվում է երկուակի՝ «Էջմիածնական» կամ «Հակոբյան» (Հակոբ Ջուղայեցու անունով) և «Եղիազարյան» կուսակցությունների: Աղբավանը է նոր պայքարը: Առաջինը Անթեպցու ուսումնակությունների դեմ ծառանում է Փիլիպոս Աղքակեցու հաջորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին (1655—1680 թ. թ.): Եկեղեցականության և ժողովուրդի շահնշախիլ մեծամասնության համակրանքը Ս. Էջմիածնի կողմն էր, որովհետև բոլորը համոզվել էին, որ Եղիազարի հակաթոռությունը վտանգավոր քայլ էր, մեծապես վնասակար հայ ժողովուրդի շահերին, որը կարող էր ծանր հետևանքներ ունենալ բովանդակ հայ ժողովուրդի համար:

Այդ վտանգը խորապես գիտակցում էին մասնավորաբար Մայր Աթոռը և ժամանակի խելացի ու հայրենասեր գործիչները: Մայր Աթոռը վճռում է ամեն գնով պառաջն առնել աղետի: Էջմիածնում հավաքվում են ամենայն առաջնորդը վանօրէից, եպիսկոպոսներ և վարդապետք... աշխարհական արք երևելիքը և մեծ հանդիսավորությամբ Ջուղայեցին ճանապարհվում է Կոստանդնուպոլիս:

Ջուղայեցին հասնում է Կոստանդնուպոլիս, «Եկին ի տեսութիւն նորա բազումք ի մեծամեծացն հայոց և թէպէտ գրեթէ ամենեքին նորա ի կողմն Եղիազարու էին, բայց յորժամ տեսին զքաղցր բարս և զառաքինացարդ բազարավարութիւն նորա, որում չէին

այնշափ տեղեակ յառաջմնէ, յարեցան ի նաւ ի սրտէ և բազումք դարձան ի կողմն նորա»:

Այս առթիվ Հակոբ Ջուլայեցին խոսք առնելիվ ասում է. «Զէ ինձ փոյթ թէ բազմաց հովուեցից կամ սակաւուց, այլ զայս ինչ ստոյգ գիտեմ... զի այդ պառակումն կարադիկասութեան հայի յահենարին վեաս Ազգին Հայոց և ոչ վերջասցի հաճապարդեան կազ ու կոփի» (Զամլան Գ 714):

Հակոբ Ջուլայեցին 7 տարի բացակայում է Մայր Աթոռից՝ սպառնացող հակաֆոռ կաթողիկոսությունը վերացնելու, պայքարող կողմերը հաշտեցնելու։ Համար, Եղիազարի կենտրոնախուլս ձգումների դեմ պայքարը կազմակերպում է Մարտիրոս Դրիմեցին, կաթողիկոսի գիտովյամբ, որ միշտ աշխատում է տարհամոզել Եղիազարին։ «բանականությամբ հաղթիր բարկությանդ և մեշտելից վերցրու այդ խոշընդուռը, որ պատճառ է լինում մի բովանդակ ազգի ավերումն»— որում է Դրիմեցին Եղիազարին (Սավալանյան, «Պատմութիւն Երուաղեմիա, 1931 թ., էջ 625):

Եղիազար մերթ հաշտությամբ, մերթ հակառակությամբ մի կերպ շարունակում է իր հակաֆոռությունը, պաշտպանություն գտնելով թուրք կառավարության կողմից, մինչև 1681 թվականը, երբ վախճանվում է Հակոբ Ջուլայեցի կաթողիկոսը։

Ջուլայեցու մահից հետո, «եպիսկոպոսունք վարդապետք... իշխանք և առհասարակ ժողովուրդք», խոհականությամբ հարձար են գտնում Եղիազարի «ապօքինի կաթողիկոսությունը օրինավորության վերածել և Եղիազար Անթեացին Էջմիածնի Մարտուռին վրա բազմեցնելու», մանավանդ որ նրա սարտին խորը հանրության օգտակար ըլլալու բարի դիտումը չպահսեցավ, և ունեցած կարողությունն ու ձիրքերը և հարբստության ինքերը անձնական վայելքի հնատկացուց, այլ ազգօգուտ շինարարություններու և ձեռնարկներու գործածեց (Օրմ. Ազգ. թ 2636):

Ավելի խառնակ են Սահակ Ա. Քիլիսցու (1674—1686 թ. թ.), Գրիգոր Պիծակ Աղանացու (1686—1693 թ. թ.), լատինամոլ Մարտիրոս Կեսարացու (Մարի) (1694—1705) թ. թ.), Հովհաննես և Համբանցու (1705—1721 թ. թ.), Թետրոս Բերիացու (1703—1720 թ. թ.), Գրիգոր Գ Կեսարացու (1721—1729 թ. թ.), Հովհաննես Զ Համբանցու (1729—1733 թ. թ.) ժամանակաշրջանները, երբ Աթոռը հափշտակելու համար ի գործ են դրվում անազնիվ միջոցներ, դավ, աղթարմայություն։ Մոտ մի դար տեղ այս անփառումակ շրջանը Կիլիկյան Աթոռի պատմության մեջ է կազմում։

Ժամանակակից մի հիշատակարան առում է, որ կիլիկյան կաթողիկոսները այս

շրջանին «երերեալ, տատանեալ շրջէին տեղեաց ի տեղ, և ոչ կարէին երկար մնալ (Աթոռում) ի սակա տառապանացն, զոր կրէին յապստամբ բռնակալացն, որով պահպանութիւն գոյից Աթոռոյն ի ձեռս ամուսնատոր քաշանալից մնայր» («Դիւան Հայոց պատմութեան», Դ 720): Այդ քահանաներից վերցին էր Ազապահ Տ. Հուսիկ՝ Հայրը Ղուկաս, Միքայել և Գաբրիել Ազապահյան կաթողիկոսների:

Կիլիկյան աթոռի հաջորդ կաթողիկոսների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Ազապահյան (Ազապահ կամ Ազպան) կոչված կաթողիկոսները, որոնք իշխում են մինչև 1860-ական թվականները։ Ազապահյան տոհմի ծագումը դեռ ստուցտ չէ։ Ըստ ավանդության, տոհմի ծագումը բարձրանում է մինչև Ժ դար։ Ըստ ալլոց՝ սկիզբ է առնում Գրիգոր Մուսարեկյանի օրերից, երբ Գրիգոր Լուավորչի Աջը անհայտացավ և մյուս հայրապետների աշերի պահպանությունը հանձնվեց Սպիտակ անոնա երեցին։ Այդ երեցին է հանձնվում նաև Կարապետ Եղիոկիացու մեջտեղ հանած աջը։ 1598 թվականին հիշվում է Սպիտակ երեցի սերնդից մի քահանա Հայրապետ անոնով, որպես լուսարարապետ սուրբ Ազերի։ Ղազար Ազապահ քահանայի սերնդի շարունակությունն է Ազապահյանների տոհմը։ 1441—1731 թվերին ոչինչ չի հիշվում Ազապահյանների գերի մասին։

1733—1866 թվականներին, Սսի Աթոռի վրա ժառանգաբար նստում են սսեցի Ազապահյան 10 կաթողիկոսներ, որոնցից առաջինն է Ղուկասը (1733—1737 թ. թ.), ծանոթիր շինարար գործունեությամբ և որին հաշրուում է իր Եղիացը՝ Միքայել Ազապահյանը (1737—1758 թ. թ.), որը նույնպես թողել է շինարարի անուն և 1758 թվականին նահատակվել է։

Միմեռն Երևանցին (1763—1780 թ. թ.) իր հայտնի «Ճամբռու-ում երկու անգամ հիշատակում է Սսի Միքայել Ազապահյան կաթողիկոսին՝ որպես Էջմիածնական թիմերի ներս ունենագություններ կատարողի։

«Նոյնպէս և յառաջն արարին օրհնեալ իշխանքն մեր, որք Ճայնակցեալք արքունական հրովարտակալ հանին զնա ի քաղաքէն և ի վիճակէն Էջմիածնի, այնպէս որ մի ևս կոխեացէ վիճակս Սրբոյ Էջմիածնի՝ կաթողիկոսն Սոյոյ Եւ է այսպէս մինչև ցայտօր» (Զամբռ. Ժ 99), Այս առթիվ Օրմանյան սրբազնա նշում է, որ թեև Հովհաննես Կոլոտի պատրիարքության օրու «Էջմիածնական վիճակներն մաս մը յուրացնելու մըտքեր ունեցած ըլլա յուր իրավասության սահմանները ընդարձակելու, Էջմիածնի հպատակ վիճակներն մաս մը իրեն վրա դարձնելով,

մանավանդ որ բոլոր տաճկահայոց կաթողիկոս ճանշցվիլ կուզեր, պնդելով, թե «Ենձ վայել է ունել զայս երկիր՝ որ ընդ իշխանութեամբ օսմանցաց է, որով և ես և Արքունի կամք»: Սակայն Կոստանդնուպոլսուն մեծամեծները իրեն քաջալերություն չտվին և մինչև իսկ արքունական հրովարտակով հանին Միքայելը ի բարձրագույն կ վիճակին եշմիածնի» (Ծրբ. Ազգ. Բ 3070):

Գաբրիել Աջապահյանը (1757—1770 թ. թ.) Աջապահ Տ. Հուսիկ քահանայի երրորդ կաթողիկոս զավակը՝ պաշտոնավարել է 12 տարի և նմանապես զբաղվել է Սսսի Աթոռի վերաշինության և պայծառության գործերով և «հեռու մնաց այն ձգումներեն զորս ունիցած էլ Միքայել»:

Սսի Աջապահյան կաթողիկոսների մեջ հայտնի է Եփորեմ Ա (1771—1784 թ. թ.): Նա զբել է իր կաթողիկոսության պատմությունը, իսկ կիսատ է Թողել Աջապահյան տոհմի ամրողական պատմության գրությունը:

Մանրամասն տեղեկություններ չունենք Թիոդորոս Աջապահյանի (1784—1796 թ. թ.) մասին, որի ձեռնադրությունը կատարվել է Կոստանդնուպոլսում: Իր հայրենաշեն գործունեությամբ և եկեղեցանքեր շինարարությամբ Աջապահյան կաթողիկոսների մեջ յուրահատուկ տեղ է գրավում Կիրակոս Ա (1797—1822 թ. թ.), որը կոչվում է մեծ, «առաքինազարդ, սրբակօն երիտասարդ հոգևորական, գեղեցիկ փառահեղ զեմքով»: Կիրակոս 25 տարի ժավալում է «անդուզ և անշեղ գործունեություն մը» և անմոռանալի հիշատակ է Թողել իր ժողովրդի սրտում և իր Աթոռում որպես մարդ, շինարար և գործունյա կաթողիկոս և վայելշագիր գրիչ: «Կիրակոս Ա Աջապահյանը եղած է մեծ իր կյանքի բոլոր գործունեության մեջ, նույնիսկ հրբ մահվան բաժակ տվին իր ձեռքբար» (ԲԱԿ Պատմ. 558):

Հիշատակության արժանի որևէ գործ Միատարել Եփորեմ Բ Աջապահյանը (1823—1831 թ. թ.), թեև եղել է «պատրաստված անձը, հարմար իր պաշտոնի մեծությանը»:

«Այլ աստվածասէր, յանդուն և համարձակիօս» էր Միքայել Բ Աջապահյանը (1832—1855 թ. թ.), որ 100-ամյա խոր ծերության մեջ է մահանում խաղաղությամբ: Բայց նրա 23 տարվա պաշտոնավարությունից մնայուն արժեք ներկայացնող գործեր չեն արձանագրված, թեև նրան «Շուժկու զեմք» համարում է Բարգեն կաթողիկոսը: Բնդշարումներ է ունենում Կոստանդնուպոլսուն Պատրիարքարանի հետ հպիսկոպոսական ձեռնությունց և վանական ու վարչական ալ հարցերի շուրջ, և ապա ուսինետ կդրե, որ ասկ է հու և պիսկոպոս շպիտի ձեռնադրե առանց գիտության Պատրիարքարանի հոգմոր ժողովուն և պատրիարքին», բայց 1851 թվակա-

նին «վերստին կսկսի յուր նախընթաց՝ արարքները ի վնաս Սսո վանուց և միջակաց կիլիկիո և ի նախատինս Ազգին և Եկեղեցվույն Հայաստանյայց»:

Պատրիարքարանը, Խրիմյանի կազմաձև տեղեկագրի վրա, 1852 թվականի հունիսին հանդիմանական գիր է ուղարկում Միքայելին՝ նրան անվանելով «վահաճայր վիճակավոր Սսո», որի «ազգային սահմանադրությանց և բարենպատակ կանոնաց անհնագանությունը արգելն հայտնի եղած է»:

«Ազգային ժողովությամբ, սաստիկ հանդիմանական գրե գրվեցան կարողիկութին» (Խզմիրլան 480—500):

Աջապահյան տոհմի վերջին կաթողիկոսն է Կիրակոս Բ (1855—1865 թ. թ.): Ազգային Սահմանադրության հրատարակումը և Զեյթունի ապստամբությունը պատահում են Կիրակոս Բ-ի օրով: «Ազգային և կառավարական գործերու մեջ իր ցուց տված անշահասեր և անաշառ զանյութը», Կիրակոս Բ շահում է կառավարության վատահությունը և ժողովը դի հարգանքը և «արժեքավոր անձնավորություն մը կնկրկայանա պատմության մեջ» (ԲԱԿ Պատմ. 657—658): Կիրակոս Բ-ի մահով շիշում է Աջապահյանների տոհմը և Կիրակիո կաթողիկոսների պատմության մեջ սկսվում է մի նոր շրջան:

Կոստանդնուպոլիսի հայոց Պատրիարքարանը Կիրակոս Բ-ի մահից հետո չի քաջալերում Սսի նոր կաթողիկոսի ընտրության հարցում Աջապահյանների ժառանգական դրությունը և աշխատում է Ազգային Սահմանադրության ժողովրդական սկզբունքներով ընտրել տալ մի արժանավորի:

1860-ական թվականներից սկսյալ Թուրքիայում հայ ազգային-եկեղեցական կյանքը դիկավարքում էր քստ Ազգային Սահմանադրության: Ազգն ու եկեղեցին իսանդավառ էին Ազգային Սահմանադրությամբ, որով վերջ էր տրվում ազգային-եկեղեցական տիրող կամայականությունների և բոլորի ցանկությունն էր, որ ազգային-եկեղեցական կյանքում իշխեն օրենքն ու իրավունքը, պարտը ու պատասխանարկությունը:

1836 թվականից սկյալ արևելահայերի աղքային եկեղեցական կյանքը զեկավարվում էր Պոլոժենիայով, իսկ արևմտահայ ազգային եկեղեցական կյանքը՝ Ազգային Սահմանադրությամբ (1863 թ.): Ազգային Սահմանադրության մեջ չկար սակայն ոչ մեկ հոգված Կիրակիո կաթողիկոսության մասին: Ի՞նչ պետք էր անել Հայ եկեղեցու ավանդության և ոգու համապատասխան կարգ ու կանոնի ենթարկելու համար Կիրակիո կաթողիկոսների ընտրության եղանակը և իրավասության սահմանները:

(Հարունակելի)